ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2025 թվականի մայիսի 14-ին կնքված **N ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/16-1** գնման պայմանագրի

ք. Երևան «16» 09 2025թ.

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Լ. Ֆարմանյանի, ով գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Լաբտեխ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Լ. Ալեքսանյանի, ով գործում է «Լաբտեխ Գրուպ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 2025 թվականի մայիսի 14-ին կնքված **N ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/16-1** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված ապրանքի ձեռքբերման նպատակով Կողմերը որոշեցին.

1. Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ»-ում և Հավելված 3-ով սահմանված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ում գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV), շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. 35121340/43:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

1. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011045565
ՀՎՀՀ 02704199

Գլխավոր քարտուղար՝

_____ Լ. Ֆարմանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Լաբտեխ Գրուպ» ՍՊԸ
Ք Երևան, Ներսիսյան 10-3/2
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050022309231002
ՀՎՀՀ 00261009

Տնօրեն՝

_____ Լ. Ալեքսանյան
(ստորագրություն)
Կ.Տ.